

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

ԼԵՒՈՆ ԹԱԴԷՐՍԵԱՆ

(ՊԱՊԱՇԱ)

Դեկտ. 19-ին, Փարիզում, վախճանւեց Հ. Յ. Դաշնակցութեան հին սերնդի պատկառելի ներկայացուցիչներից մէկը՝ Լեւոն Թադէռսեանը, որ ընկերների եւ բարեկամների շրջանում աւելի ծանօթ էր Պապաշա անունով:

Լեւոն Թադէռսեանը Ագուլեսցի էր, Քրիստովոր Միքայէլեանի քրոջ որդին: Ծնւել էր 1865 թ. փետր. 2-ին, մանր առեւտրականի ընտանիքում: Հայրը նպարավաճառի խանութ ունէր Զաքաթալայի շրջանի Կախ աւանում, իսկ մայրը զաւակներով ապրում էր Ագուլիսում, սեփական տան մէջ:

Հայրս երեք տարին մէկ անդամ դալիս էր գիւղ, այդ պատճառով մէր տան բոլոր երեխանների տարիքը իրարից տարբերում է երեք տարով, ժպտալով ասում էր Պապաշան:

Նրանք երեք եղբայրներ էին՝ Լեւոն, Ստեփան (Սամսոն) ու Յովսէփ, եւ մէկ քոյր՝ Եղիսաբէթ:

Լեւոնը տասը տարեկան էր, երբ մեռաւ հայրը, ընտանիքի ամբողջ հոգսը ձգելով մօր վրա: Հօրից մի քիչ դրամ էր մնացել. մայրը այդ դրամով պահում էր զաւակներին:

Լեւոնը նախական կրթութիւն ստացաւ ծննդավայրի ծխական դպրոցում, ուր ուսուցիչ էր Տաֆֆին: Գիւղական դպրոցն աւարտելուց յետոյ, մայրը նրան ուղարկեց Թիֆլիս, որպէս զի իր եղբօր՝ Քրիստովորի աջակցութեամբ արհեստ սովորէ կամ խանութում դործակատար դառնայ եւ փող աշխատէ: Լեւոնը, ընդհակառակը, երազում էր ուսումը շարունակելու մասին:

Մօր պնդումներին վրա, թէ անպատճառ պէտք է դրամ վաստակելու մասին մտածես, խօսք է տալիս եւ այդ պայմանով կարողանում է մեկնել Թիֆլիս. մտքում, սակայն, որոշել էր չկատարել մօր պահանջը եւ մտնել որ եւ է դպրոց: 1879 թ. ապր. 12-ին Արարաջի

Սաեփանի Փուրգոնով դուրս է դալիս Ազուլիսից եւ ապր. 25-ին հասնում է Թիֆլիս:

Քրիստափորը այդ ժամանակ ուսանում էր Ուսուցչական ձեմարանի վերջին դասարանում: Երբ կարգում-վերջացնում է քրոջ նամակը՝ դասնալով ասում է սրտարակ սպասող Լեւոնին. — Եթէ եկել ես ուսում առնելու, բարի ես եկել, ես քեզ կօգնեմ: Իսկ եթէ եկել ես դրամ շահելու նպատակով, ինչպէս եկել ես՝ այնպէս էլ վերադարձիր. ես քեզ չեմ կարող օգնել:

Լեւոնի ուզածն էլ հէնց այդ էր: Նա խոստովանում է, որ եկել է ուսում ստանալու եւ որ խարել է մայրիկին:

Քրիստափորը, որ ապրում էր մասնաւոր դասելով, մի աշակերտ էլ է գանում եւ դրանից ստացած 25 րուբլին յատկացնում իր քեռորդու կարիքներին: Լեւոնը տեղաւորում է քեռու մօտ եւ ամբողջ ամառ պատրաստելով՝ 1879 թ. սեպտեմբերին յաջողութեամբ քննութիւն է տալիս եւ ընդունում է Ներսիսեան գողոցի երրորդ դասարանը: Նրա հետ եկած բանաստեղծ Քրիստ. Թագէոսեանը եւ ուրիշներ, որ նոյն ուսումն էին ստացել ինչ որ Լեւոնը, հազիւ կարողանում են ընդունել երկրորդ դասարան: Քննութեան ժամանակ պատանի Լեւոնի վրա ուժեղ տակաւորութիւն է գործում ուսուցիչ Ստ. Պալասանեանը:

Քրիստափորը բնակւում էր Միքայէլեան փողոցի թիւ 179 տանը, ուր մի ընտանիքում առանձին սենեակ էր վարձում: Լեւոնն էլ ամբողջ ժամանակ նրա մօտ է ապրում: Երբ Քրիստափորը, մի տարի յետոյ, աւարտելով ուսուցչական պաշտօնով տեղափոխւեց Ազուլս, Լեւոնը մնաց նոյն ընտանիքում:

1884 թ. Լեւոնը աւարտում է Ներսիսեան գողոցը եւ 1884–85 ուսումնարանում: Հայոց լեզվի ուսուցիչ է հրաւիրում Ազուլիսի ուսումնարանում: Դասաւանդում է երրորդ, չորրորդ եւ հինգերորդ դասարաններում:

1885 թ. փակում են հայոց ծխական դպրոցները: Լեւոնը գնում է Թիֆլիս, ուր Քրիստափորը նրան տեղաւորում է զէնքի եւ գրականութեան դաշտնի պահեստում՝ վատահելով նրան յեղափոխական ամենապատասխանատու գաղտնիքներ: Առհասարակ, Քրիստափորը Լեւոնի նկատմամբ ունէր անսահման վստահութիւն: Լեւոնն էլ իր հերթին պաշտում էր Քրիստափորին եւ անտրասունջ կատարում նրա կամքը:

Նոյն տարի աշնանը Ազուլիսի գողոցը վերաբացւեց: Լեւոնը վերադարձաւ հայրենիք, ուսուցչութեան պաշտօնով եւ այնտեղ մը-

նաց մինչեւ 1888 թ., երբ տեղափոխւեց Թիֆլիս եւ մի տարի պատրաստեց Քրիստովորի մօտ պետական դպրոցում քննութիւն բռնելու նպատակով։ 1889 թ. ամառը գնաց Բագու, որ ոչալական դըպրոցում քննութիւն տայ եւ մտնէ Մոսկվայի Պետրովսկայա դիւդանատեսական ճեմարանը, բայց անակնկալ կերպով հիւանդանալով՝ ծրագիրը ջուրն ընկաւ։

1890 թ. ամառը Քրիստովորը նրան ուղարկում է Անդրկասպեան երկիրը ի նպաստ թրքահայոց հանգանակութիւն անելու եւ յեղափոխական կազմակերպութիւններ առաջ բերելու համար։ Ապա ուսուցիչ է ուղարկում Տրապեզոն, բայց թիւրք կառավարութիւնը չի արտօնում մնալու քաղաքում։ *)

1890 թ. սեպտեմբերից մինչեւ 1899 թ. ուսուցչութիւն է անում Գանձակում։

Այդ տարիներին Գանձակում կար երկու հակառակորդ թայֆամէկը Աղաւանեան արքեպիկ գլխաւորութեամբ՝ բաղկացած էր հարսուտներից եւ պահպանողականներից, որոնց մէջ աչքի էին զարնում հեռագրական պաշտօնեայ Համասփիւռը եւ ուսուցիչ Յովհաննանը։ Միւսը՝ աղաւականներ – Յովհաննա Բէգլարեան, Մկրտիչ Քհյու, Բարաքէուսիլեան քհյու, Երէցիոն Նարաթեան եւ ուրիշներ։

Հողաբարձական ընտրութիւնների ժամանակ պահպանողականները պարտւել էին։ Նորընտիր Հողաբարձութիւնը դպրոցի տեսուչ էր հրաւիրել Ներսէս Դաւթեանին եւ իրաւունք էր տւել նրան ուսուցչական խումբ կազմելու։ Ն. Դաւթեան ուսուցիչ է հրաւիրում աչքի ընկնող աղաւատիտ երիտասարդներ՝ Սերգէյ Դանդուրեանին, Վարդան Ենիկոլոպեանին, ինչպէս եւ Քրիստովորի յանձնարարութեամբ՝ Լեւոն Թաղէսսեանին։

Պահպանողականները ահագին աղմուկ են բարձրացնում, թէ հրաւիրած ուսուցիչները անկրօն ու անաստւած եւ եկեղեցու թըշնամի մարդիկ են, պասի դէմ են արտայայտում, բնագիտութեան դասերով անբարոյական ազգեցութիւն են գործում երեխանների վըրա եւ այլն։ Յատկապէս լ. Թաղէսսեանին մեղադրում են այն բանում, որ, իբր թէ, դասի եամանակ, հակառակ հայոց եկեղեցու դաւանութեան, հերքել է սատանաների գոյութիւնը։ Որ, իբր թէ, «մահմետականութիւն է քարողել», որովհետեւ ասել է, թէ բոլոր հա-

*) Այս դէպի լ. Թաղեռսեանը ինքը պատմել է «Հայրենիք» ամսագրում (1925 թ. նոյեմբ.)։

յերը՝ ինչ կրօնի էլ պատկանելու լինեն՝ հայ են եւ պէտք է ապրին, իբրև մէկ ազգ:

Այս եւ նման անհեթեթութիւններով ուսուցչական խմբի մասին գրգռիչ լուրեր են տարածւում ժողովրդի մէջ: Համախօսական է կազմւում եւ ուղարկում էջմիածին: Մակար կաթուղիկոսը քննիչ է նշանակում Ղեւոնդ քահ: Խարազեանին – մի կեղծաւոր եւ երկերեսանի անձնաւորութիւն, որի քննութեան արդիւնքը լինում է այն, որ մարտ 8-ին էջմիածնից հեռագիր է ստացւում, որով հրահանդւում է փակել Գանձակի երկսեռ վարժարանները, լուծել հոգաբարձութիւնը, հեռացնել ուսուցիչներին եւ ներսէս Դաւթեանին, նրա կնոջ ու լ: Թաղէսսեանին զրկել հայոց դպրոցներում ուսուցչութիւն անելու իրաւունքից:

Տեղի են ունենում յուղիչ տեսաբաններ: Աշակերտութիւնը՝ կապւած ուսուցիչների հետ՝ լաց ու շրւան է բարձրացնում եւ մերժում է հեռանալ դպրոցից: Աշակերտներին զօրով ճանապարհ են դնում եւ դպրոցը փակում են:

Մի օր Սիմոն Շինեանը, որ այդ ժամանակ ուսուցիչ էր քաղաքային դպրոցում, յայտնում է լ: Թաղէսսեանին, թէ ինքը ժանդարմաներից լուր է առել, որ հայոց լեզվի ուսուցիչ թաղէսսեանը անսսաւածութիւն է քարոզում եւ, ուրեմն, ցարի դէմ է: Որպէս զի ձերբակալութեան առիթ չլինի, լ: Թաղէսսեանը մարտի վերջերին հեռանում է թիֆլիս:

Այսուհետեւ նա ընդմիշտ թողնում է ուսուցչական ասպարէզը: Նախ, Ս. Զաւարեանի յանձնարարութեամբ, մտնում է հակաֆիլ-լոկսերային խմբի մէջ եւ մինչեւ 1898 թ. աշխատում է Քութայիսի եւ Թիֆլիսի նահանգներում, առաջ իրրեւ կրասեր հետազոտող, յետոյ որպէս քննիչ-վերատեսուչ: Իր բարեխիղճ ու գործոն պաշտօնավարութեամբ՝ վաստակում է թէ բարձր իշխանութեան եւ թէ ստորագութեամբ գործակիցների վստահութիւնն ու համակրանքը:

1898 թ. հոկտեմբերին վերջ է գտնում Փիլոկսերային գործը: Պապաշան գնում է Թիֆլիս: Այդ ժամանակ Քրիստովորը, Հ. Յ. Դ. Երկրորդ ընդհ. ժողովի որոշումով, պատրաստում էր անցնել արտասահման «Դրօշակ»-ի եւ եւրոպական պլրոպագանդի գլուխը կանդնելու համար: Հոկտ. 10-ին Քրիստովորին ճանապարհ է գնում դէպի Վլաղեկաւկաղ, իսկ ինքը անցնում է Բագու, զինւած Քրիստովորի յանձնարարական նամակով Արք. Դաստակեանի վրա: Արա աջակցութեամբ կառավարչի օդնականի պաշտօն է ստանում Մկ. Քալանթարեանի Բալախանու նաւթահանքի եօթերորդ բաժնում, ուր

ծառայում է մէկ ու կէս տարի : Ապա մէկ ու կէս տարի էլ կառավարչի ոլաշտօն է վարում Ղեւոնդ Աբրամիչ Մարգարեանի նաւթահանքերում : Պապաշայի բնորոշման տեսակէտից շատ հետաքրքրական է հետեւեալ դէպքը :

Մի օր Մարգարեանը ասում է Պապաշային .

— Գիտես, Լեւոն, շատ լաւ երիտասարդ ես, ամա Բալախանու մարդ չես :

— Ինչո՞ւ, հարցնում է Պապաշան :

— Եսքան ժամանակ է հստեղ ես, մի անդամ բանւոր չես ծեծել . բա՛ առանց բանւոր ծեծելու կառավարիչ կարելի՞ է լինել :

Պապաշան բացատրում է, թէ ինքը ուզում է բարոյական ազգեցութեամբ աշխատել :

— Զէ՛, մատադ : Էս էն երկիրը չի . . .

Ու Պապաշային տեղափոխում է Բիբի-էյրաթի իր նոր նաւթահանքը կառավարչի պաշտօնով : Այսուղ Պապաշան մնում է մինչեւ 1902 թ. վերջը :

1903-1906 թ. պաշտօնավարում է նաւթարդիւնաբերողների Համագումարների Խորհրդի կահ ու կոյքի բաժնում, որպէս հաշւապահի օղնական : Ապա, երբ Նիկոլ Դումանը գնում է Պարսկաստան, ստանձնում է նրա պաշտօնը, իրբեւ նաւթ . Համ . Խորհրդի նաւթի ամբարձման գործի վարիչ : Սա պատասխանատու, բացարձակ վատահութիւն պահանջող պաշտօն էր, եւ Պապաշան ճիշտ գրա մարդն էր :

Ինչպէս տեսանք, արդէն 1890 թ.ից Պապաշան, Քրիստոփորի ձեռքի տակ, մասնակցում էր յեղափոխական գործերին : Ֆիլոկարային խմբում եղած ժամանակ, Միխայլովոյում, Սուրբամում եւ ուր որ լինում էր, հայերի շրջանում քարոզում էր Դաշնակցութեան գաղափարները, «Երօշակ» էր տարածում, դաշնակցական խմբեր էր կազմում եւ կապ էր պահում Թիֆլիսի զեկավար լնկերների հետ : Բայց Պապաշայի խակական գոբծունէութիւնը, կարելի է ասել, ըսկաւեց Բագումից, ուր նրա առջեւ աշխատանքի լայն դաշտ կար : Ծընորհիւ իր անսահման նւիրումին հայ ժողովուրդին ու կուսակցութեան, իր դիւրահաղորդ ու գործնական բնաւորութեան եւ ծայրայեղ գաղտնապահութեան՝ նա արագ գրաւեց պատասխանատու դիրքեր : Դարձաւ Բագուի կազմակերպութեան ողնաշարի գլխաւոր օղակներից մէկը : Չոփուռեան ծածկանունով էր յայտնի Ոսկանապատի կենտր . Կոմիտէի մէջ եւ նրա հեղինակութիւնը տարածւում էր աւելի հեռուները : Համեստ ու սակաւախօս՝ նա գերազանցապէս գործի մարդ էր : Հաշիւ, գաղտնի պահեստներ, ծածկագրութիւն,

անցագրային գործ - ուր գործ ու գործնական հմտութիւն էր պահանջում, այստեղ էր եւ Պապաշան: Բեմբասացութիւն, հրապարակային ժողով, լրագրութիւն, արտաքին փայլ - նրա համար խորթքաներ էին: Այդ պատճառով թէ կուսակցութեան եւ թէ հասարակական մարմինների մէջ նա ամենից առաջ գրաւում էր սեւ ու յարատեւ աշխատանք պահանջող գործերը:

Երբ, հայ-թրքական ընդհարումներից յետոյ, ոռւսական առաջին յեղափոխութեան օրերին, կովկասի հայ կեանքը պղտորւեց եւ Դաշնակցութեան ներսը առաջ եկան միջրանական եւ անջատական հոսանքները, հրապարակային պայքար մղող Խաժակների ու Թոփչեանների կողքին Պապաշայի պէս գործիչներն էին, որոնք փրկեցին կուսակցութիւնը կործանում ից: 1907 թ. Վիէննայի ընդհանուր ժողովին Պապաշան արդար հպարտութեամբ վայելեց իր թափած աշխատանքի պառակները:

Այդ ժողովին էր, որ առաջին անգամ ես էլ բախտը ունեցայ ծանօթանալու եւ մտերմանալու Պապաշայի հետ: Նա ա'յդ ժամանակ եւ դրանից առաջ էլ արդէն յայտնի էր Պապաշան անունով: Հիւանդու աչքերը պահած սեւ-կազոյտ ակնոցի տակ՝ նա ժամերով լուս եւ անվրդով նստում էր ժողովներին, խօսք էր առնում միայն ծայրայեղ անհրաժեշտութեան դէպքերում եւ միշտ փաստական ճշումների կամ գործնական առաջարկութիւնների համար, եւ ինչ որ առում էր, համարեա ամէն անգամ լինում էր տեղին: Բոլորովին այլափոխում էր նա յանձնաժողովներում, ուր պահանջւում էր գործ, թիւ, փաստ: Այստեղ նա իրեն զգում էր հարազատ տարերքի մէջ եւ մըցակից չունէր, եթէ չաշւենք Բժ. Յ. Տէր-Դաւթեանին, որի հետ համեմատած Պապաշան շատախօս հռետոր էր . . .

Վիէննայի ընդհանուր ժողովից յետոյ էր, որ կովկասում ծայր տըւին հալածանքները Դաշնակցութեան դէմ: Յարական բանտերը լեցւեցին գաշնակցականներով: Պապաշային ամենից ուշ ձեռք տրին: 1908 թ. ամառը նա մասնակցեց Հ. Յ. Կովկասեան Ռայոնական ժողովին եւ մինչեւ 1909 թ. մայիս կարողացաւ զերծ մնալ Լըժինեան որսի ըներից: Նա երբեմն նոյն իսկ դժգոհում էր.

— Ամենքը բանառում են, իսկ ես աղատ ման եմ դալիս. մարդիկ ի՞նչ կը մտածեն իմ մասին . . .

Եւ 1909 թ. մայիսին հերթը նրան էլ հասաւ. նրան բանտարկեցին եւ հանդուցեալ Թագէոս Ամիրեանի հետ կարճ ժամանակով մի խուցում պահելուց յետոյ, ուղարկեցին նովոչերկասկ, Լըժինի գործունէութեան կենտրոնը: Ճանապարհին, Գերբենտում, ամէն յարմարութիւն կար փախչելու. Թ. Ամիրեանը յորդորեց նրան փախչել

միասին, բայց նա հրաժարւեց. Պապաշայի պատճառով Ամիրեանն էլ չփախաւ:

Բանտարկութիւնը Նովոչերկասկում տեսում է մինչեւ 1911 թ.: Այդ միջոցին մեռնում է նրա մայրը և չորս երեխաները մնում են անխնամ: 1911 թ. ամառը նրան ազատ են թողնում 5000 ր. երաշխաւորութեամբ: Պահանջւած գումարը մտցնում է օտարացած մի հայ՝ Ալբէգովը:

Բանտային արգելքը ազգել էր Պապաշայի թոքերի վրա: Բժիշկ-ների խորհրդով նա զնում է Կոջոր ամարանոցը, Թիֆլիսի մօտ: Հոկտեմբերին, երբ գալիս է Բագու, նորից բանտարկում է, փոխադրում է Թիֆլիս, Մետեխի բանտը, և այստեղից Գերասիմ Բալայինի, Սրինդի և ուրիշների հետ տարւում է Պետերբուրգ, ուր 1912 թ. գարնան տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան մեծ գատավարութիւնը: Պապաշան արձակեց անպարտ եւ գալով Բագու, մինչեւ 1918 թ. սեպտ. 15-ը վարեց Նաւթ. Համ. Խորհուրդի քաղաքի դրասենեակի հաշւադահի օդնականի պաշտօնը:

Պաշտօնը Պապաշայի համար օրւայ ապրուստի ապահովութեան միջոց էր սոսկ: Նրա կեանքի բովանդակութիւնը գլխաւորապէս Դաշնակցութիւնն էր. նրա ոյժի, ժամանակի, մատոր ու նիւթական միջոցների մեծ մասը պատկանում էր Դաշնակցութեան, որ ասել է՝ հայ ժողովրդին: Եթի 1918 թ.-ին Բագուն մատնեց քաղաքացիական կուի հրդեհին, որին յաջորդեց հայ-թիւրքական պատերազմը, Պապաշան ամբողջ ժամանակ, «Բիւրոյում» էր: Լքած տուն ու ընտանիք, անձնական ամէն գործ՝ նա ոտքով-գլխով կլանւած էր կազմակերպական աշխատանքով. կուսակցական գործը գլխաւորապէս նրա վրա էր ծանրացած:

Նրան էին յանձնեւում եւ զանազան կողմերից բերւող թրքական իրերը: Նրա հսկողութեան տակ ինչ որ ստացւում էր ինամքով արձանագրում եւ պահւում էր: Վերջը, էսէրների միջոցով, ամբողջը - ոսկեղին, գորգեր եւ այլն - յանձնեց իրենց տէրերին: Թիւրքերը մնացել էին ապշած . . .

1918 թ. սեպտ. 15-ին Բագուն ընկաւ: Ընդհանուր նահանջողների հետ Պապաշան էլ անցաւ էնդէլի, ուր ծանր հիւանդացաւ եւ մէկ-երկու ամիս մնաց անկողնում: Առողջացաւ գլխաւորապէս Ռոստոմի գուրդուրուտ հոգատարութեան ընորհիւ:

Անդիմացիների Բագու մտնելուց յետոյ, Գաղթականական Դոմիտէի հախաղահ Արամ Առաքելեանն էլ վերադարձաւ: Նրա տեղը հախաղահ նշանակւեց Պապաշան, որ իրեն յատուկ եռանդով եւ անձնազութեամբ վարեց Գաղթ. Կոմիտէի գործերը եւ հետզհետէ

գաղթականներին վերադարձրեց Կովկաս։ Ճանապարհ էրեց եւ Ռուսումին։ Այդ առթիւ Պապաշան յուզումով պատմում էր .

— Կարծես նախալքում էր։ Ամէն կերպ աշխատեցի, որ հանգիստ անցնի ճամբորդութիւնը։ Նաւ գնացի։ Հետը մի տուպակ նուշ դրի, որ Ռուսումը այնպէ՞ս սիրում էր։ Ո՞վ կը մտածէր, թէ այդ մեր վերջին տեսակցութիւնը պիտի լինէր։ Նաւում հետը որբանոցի երեխաններ կային։ Նրանցից էլ վարակւեց, երեւի . . .

Դարձեալ Ռուսումի մասին պատմում էր .

— Էնգէլիում գաղթականները բննել էին սոլով շէնքերը։ Վերջին եկողների համար տեղ չէր մնացել։ Կարելի էր տեղաւորել միայն ոսւս զինւորների թողած տաղաւարներում, բայց նրանք էլ չափեց աւելի աղտոտ էին եւ գարշանքով լեցւած։ Մի օր, երբ նոր գաղթականներ եկան, Ռուսումը դիմեց ընկերներին, որ գնան մաքրեն տաղաւարները։ Բացի երկու հոգուց, ոչ ոք տեղից չափաւեց։ Ռուսումը ոչինչ չասաց. եւ այդ երկու հոգու հետ ինքը սկսեց մաքրել տաղաւարը։ Պէտք էր տեսնել, թէ ինչպէ՞ս միւսները ամօթահար տեղից վեր ցատկեցին եւ սկսեցին օդնել . . .

Գաղթականական գործը վերջացնելուց յետոյ, 1919 թ. յունիսին Պապաշան անցնում է Բագու։ Այսաեղ նրա տունն ու տեղը քարու քանդ էր եղել։ Գիրք ու գորգ, կահ կարասի, տանը ինչ որ կար արժէքաւոր՝ ամբողջը գողացւել էր։

Յուլիսի վերջերը Երեւանից հեռագիր է ստանում, թէ ընտրւած է Խորհրդարանի անդամ եւ օգոստ. 1-ին պէտք է ներկայ գտնուել Խորհրդարանի բացմանը։ Թողնում է ամէն ինչ եւ շտապում է Երեւան։ Օգոստ. 1-ին, անհուն յուզումով մտնում է Հայաստանի Հանրապետութեան անդրանիկ Խորհրդարանի սրահը . . .

Այսուհետեւ սկսում է ողեւորւած ու փոթորկոտ կեանքի մի նոր շրջան։ Պապաշան իր մտքի եւ հոգու բովանդակ թափով լծւում է Հայաստանի պետական շինարարութեան գործին։ Խորհրդարանական նրա աշխատանքը յատկապէս աչքի էր ընկնում ելեւմտական յանձնաժողովում, որի տեղեկաբերն էր։ Երբ ոք եւ է գործի համար պէտք էր լինում անվիճելի հեղինակութիւն պահանջող անձի ներկայութիւնը, առաջին հերթին Պապաշայի անունն էր արտասահնուում։ Եւ զարմանալի չէ, որ երբ 1919 թ. աշնանը Երեւանում, Հ. Յ. Դ. 8-րդ Ընդհ. Ժողովը որոշեց կազմել Գերագոյն Դատական Ատեան, ընական կերպով, դատաւորներից մէկը նշանակւեց Պապաշան։

Թէ որպէս Խորհրդարանի ու Դատական մարմնի անդամ, թէ երեւ պետական, հանրային ու դաշնակցական գործիչ, Պապաշան եր-

բեք չդաւաճանեց իր հաւատամքին, երբեք չընկրկեց, ամենադաժան օրերին անդամ մնաց բարոյական ու գաղափրական բարձրութեան վրա եւ տւեց ինչ որ կարող էր եւ աւելին իր սիրած ժողովրդին ու հայրենիքին :

Փետրւարեան ապստամբութիւնից յետոյ, նա էլ անցաւ թաւրիզ, այնտեղից Փարիզ, Փընէլ ու նորից Փարիզ։ Եւ կեանքի վերջին տասնամեակը նւիրեց Հ. Յ. Դ. Կենտրոնական Դիւանին, որի տնօրէնն էր եւ որին ծառայեց հաւատարմութեամբ, ինչպէս դրանից առաջ ծառայել էր հայ ժողովրդին ու Հ. Յ. Դաշնակցութեան :

*
**

Այսքա՞ն հակիրճ, այսքան չոր զուրս եկա՛ մեր յօդւածը Պապաշայի մասին։ Թող ներփակ մեղ նաեւ, իբրեւ վերջաբան, առաջ բերել եւ մի քանի թոռուցիկ վերլիշումներ։

Ինչպէս վերը ասի, Պապաշային ես առաջին անդամ հանդիպեցի Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհ. Ժողովում, Վիէննայում, 1907թ. գարնանը, եւ այն ժամանակ արդէն նա Պապաշան էր։ Անչուշտ, սիալում է Վ. Ն. դրելով «Յուսարեր»ում, (25 դեկտ.) թէ 1907թ. ամառը Պապաշան դեռ Պապաշան չէր եւ որ այդ անունը ինքն է տւել նրան, Ա. Միքայէլեանի հետ միասին։ Ինքը Պապաշան պատմում էր, թէ դեռ ուսուցիչ եղած ժամանակ իր ընկերակիցները իրեն կոչում էին Պապաշան։ Նա այդ բացատրում էր իր հանդարտ եւ հոգատար բնաւորութեամբ։ Ուր էլ լինէր, միշտ ուրիշ մասին էր մտածում, օդնում էր ուրիշներին, երբ ընկերների մէջ որ եւ է վէճ ու թիւրիմացութիւն էր սկասանում, միշտամում եւ հաշտեցնում էր։ Արդէն պատանի հասակից նա իրեն մեծ էր զգում եւ մեծի պէս էր վարւում։ Իր նկարագրի այլ «Հայրական» յատկութեան չնորհիւ նրան մկրտել էին Պապաշան անունով։ Մի անուն, որ նա շատ էլ չէր սիրում, բայց, վերջի վերջոյ, հաշտել էր հետը։

*

Ընդհանուր ժողովի ընթացքում, Վիէննայում, յաճախ մի խըմբով միասին էինք ճաշաբանում - Եղիշէ Թոփիչեանը, Պապաշան, Բժ. Յ. Տէր-Դաւթեանը, Սեւքարեցի Սաքոն, Բալաջանը, Եր. Ֆրանդեանը, երբեմն եւ Ա. Շահիսթունեանն ու Արամը։ Ճաշողների մէջ ամենից գանդաղը Պապաշան էր։ Մինչեւ որ իր դանակ - պատառաքաղը եւ ափսէները անձեռնոցով մաքրէր, սեղանի վրա դրւած վոքրիկ հացիկներն արդէն սպառւած էր լինէին։

— Տօ՛, տնաշէններ, հլա չնստած՝ արդէն իմուեցիք. մի բան էլ ինձ թողէք, է՛, գանգատուում էր նա միշտ։ Եւ ի վերջոյ սովորութիւն դարձրեց. հէնց որ սեղան նստէր, անմիջապէս մի զոյտ հացիկ գնում էր իր սմանի կողքը եւ աչալուրջ հսկում էր, որ ձեռք չտան։

Պապաշայի հացիկներն անվերջ սրախօսութեան նիւթ էին մեր սեղանի շուրջ։ Մանաւանդ շատ էր ձեռք առնում եւ Թոփէեանը իր տափակ-տափակ սրախօսութիւններով, կամ, ինչպէս Պապաշան էր ասում, «բթախօսութիւններով»։

*
**

Վիէննայի լնդհ. Ժողովից յետոյ, երբ պատգամաւուրները ցրւում էին շրջանները, մի շարք ընկերներ անցաղրային դժւարութիւններ ունեցան։ Բնականարար, Պապաշայի «մասնագիտութիւնը» այստեղ էլ պէտք եկաւ։ Նա էր «յարմարեցնում» անցաղիրները։ Եւ, ի միջի այլոց, իմ անցաղիրն էլ առաւ ձեռքիցս եւ ինձ տեսց մէկ ուրիշը։ Իմ անցաղը նոստոմը անցաւ Ռումանիա եւ այստեղ ձերբակալւեց։ Հետաքրքրական է, որ տարիներ յետոյ, ելք 1915 թ. սկզբները ես Ադդ. Բիւրոյի կողմից որոշ յանձնարարութեամբ պէտք է երթայի Ռումանիա, Բուքրէշից ստացւեց վիզայի մերժում։ Մերժման հիմքը իմ մի անգամ Ռումանիայում քանտարկւած լինելն էր։

*

1909-ին ես ուսանում էի Պետերբուրգում։ Դաշնակցականների ձերբակալութիւնները լայն համեմատութիւններ էին ստացել։ Հերթը կարող էր լինձ էլ հասնել։ Զգուշութեան համար ես յաճախ ընակարան եւ անցաղիր էի փոխում։ Մի ժամանակ հասաւ որ բոլոր ընկերների անցաղիրներն օդտագործել էի եւ պաշարս արդէն սովորուած էր։ Ի՞նչ անել։ Երբ մի օր այս մասին խօսք արի Միշա Արզումաննեանին, որ նոյնպէս «ուսանում» էր Պետերբուրգում, նա վրճռական շեշտով պատգամեց։

— Փա՛հ, տնաշէն, Պապաշային գրիր։ Ես էլ նրա անցաղով եմ ապրում։

Երկու շաբաթ չանցած արդէն գրպանումս ունէի Պապաշայի «պաշտօնատնից» գուրս եկած անցաղիրը Գորիսի բնակիչ Լեւոն Մելիք-Ղարաբէողեանի անունով։ Այնքա՞ն ներկայանալի, պատկառելի արտաքինով, լաւ դրւած կնիքներով, մշտական ու կանոնաւոր անցաղիր էր, որ մեր տան գոնապանը առանձին հաճոյախօսութիւն շըռապելեց Գորիսի պաշտօնատան քարտուղարի հասցէին։ Աշխարհում

ի հարկէ, Լեւոն Մելիք-Ղարագէողեան անունով մարդ գոյութիւն չունէր, եւ անցագրի հեղինակը Հ. Յ. Ռոկանապատի կենտր. Կոմիտէի անդամ Չոփուրեանն էր: Այդ անցագրով ես ապրեցի Պետերբուրգում զրեթէ մէկ ամբողջ տարի: Եւ ո՞վ չի ապրել Պապաշայի պատրաստած անցագիրներով:



1908 թ. ամառը Բալախանիում Ռայոնական Ժողով ունէինք: Ժողովի վերջին նիստում ընտրւել էր մի յանձնաժողով՝ արձանապարութիւնները վաւերացնելու և առկախ մնացած խնդիրները կարգադրելու համար: Արձանագրութիւնների մէջ կային իրատ վտանգաւոր բանաձեւեր – ահարեկում, էքս եւ այլն: Եթէ մէկի ձեռքին բոնէին՝ վերջը շատ վատ կը լինէր . . .

Ամառայ մի տօթ օր էր Յանձնաժողովը Պապաշայի սենեհեկում նոր էր վերջացրել աշխատանքը: Յանձնաժողովի տնդամ Արդիւլիանդանեանը տարրածւած գորգի վրա հանգուստանում էր, Պապաշան նստած էր գրասեղանի մօտ: Ես էլ ընկել էի մահճ սկալի վրա, արձանագրութիւններն էլ՝ բարձիս տակ:

Մէկ էլ՝ թա՛խկ, թա՛խկ, թա՛խկ ծհծեցին եւ անմիջապէս բաց արին գուռը: Շէմքի վրո երեւաց ժանշարմտիան սպան՝ շրջապատւած ոստիկաններով:

— Այստե՞ղ է Լեւոն Իվանովիչ Թաղէոսեանը . . .

Մէկ ակնթարթ միայն: Ա. Գիւլիանդանեանը անմիջապէս թւռուած կողքի սենեհակը: Ես բնադրօրէն վերցրի բարձի տակի կապոցը, զրի թեւիս տակ ու ծրկեցի գուռս: Դրան մօտ, անդպաշութեամբ հրեցի սպային ու «ներողութիւն» ասելով՝ տառաջ անցայ: Սպան յանկարծակիի եկած՝ մի կողմ քաշւեց, ոստիկանները ճանապարհ բաց արին ու դուրս սպասող բանւոր ընկերները թոցրին ձեռքից արձանագրութիւնները եւ ինձ էլ կառք նստեցնելով՝ տարին Բժ. Յ. Զաւրեանի մօտ . . .

Այդ ամբողջ ժամանակ Պապաշան հանդիսատ կանգնել էր սեղանի մօտ եւ ակնոցի տակից հանդարտ հետեւում էր կատարւածին:

— Ո՞վ են այդ պարոնները, հարցնում է նրան սպան:

— Մեր ծառայողները, պատասխանում է Պապաշան: Տեսէ՞ք նրանց գլխարկն ու հագուստն էլ մնացել է:

Եւ, իրօք, մենք հեռացել էինք գլխարաց ու կէս հագնւած:

— Ա՛յ, շա՛ն աղերք, կատակում էր նա յետոյ, համա կախաղանի վրա կը ճօճէիք, եթէ ճանկերն ընկնէիք:

Փարիզ